ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/59

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Մեդիսար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Գաբրիելյանի, ներկայացուցիչ՝ Ա. Մարգարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական սարքերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-9/42-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ.-ի թիվ ՊՆ/Պն/02/1002-2021 գրության հիման վրա, 04.03.2021թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/59 համարի ծածկագիրը:

12.03.2021թ.-ին, 18.03.2021թ.-ին, 26.03.2021թ.-ին և 01.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.03.2021թ.-ի թիվ ՊՆ/Պն/02/1002-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող փույժերի և փուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ,

1. միակողմանի մասնակի լուծել է՝ «ՄԵԴԻՍԱՐ» ՍՊԸ-ի հետ 09.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/42-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

2. միակողմանի մասնակի լուծել է՝ «Մեդիփլաս» ՍՊԸ-ի հետ 29.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 ծածկագրով գնման պայմանագիրը:

3. միակողմանի մասնակի լուծել է՝ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հետ 18.11.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/41-3 ծածկագրով գնման պայմանագիրը:

4. միակողմանի ամբողջությամբ լուծել է՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի հետ 19.11.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/42-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում են վերը նշված մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մեդիսար» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 05.03.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 12.03.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.03.2021թ. թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ

«Մեդիսար» ՍՊԸ-ին(այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր: Մասնակիցը համարում է նախաձեռնած ընթացակարգը ոչ իրավաչափ, ակնհայտ անհիմն և ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջնի, ներկայացնում ենք սույն դիրքորոշումը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 19.11.2020թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-20-9/42-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր);

2. Պայմանագրի թիվ 1 Հավելվածի համաձայն գնման առարկա հանդիսացող էլեկտրոնային վերլուծական լաբորատոր կշեռքի մատակարարման ժամկետ էր սահմանված 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.:

3. Պայմանագրի 2.1 կետի համաձայն Գնորդը իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

4. «Մեդիսար» ՍՊԸ-ն դեռևս 29.12.2020թ.-ին գրություն է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն ֆորս մաժորային հանգամանքների առկայության վերաբերյալ, որոնցով էլ պայմանավորված է եղել մատակարարման ժամկետի խախտումը: Այդ հանգամանքը հաստատվում է նշված գրության հետ միաժամանակ ներկայացված բեռնափոխադրող ընկերության՝ Լուսա Տրանս ՍՊԸ- ի փաստաթղթով;

5. 05.02.2021թ.-ից սկսած Պատվիրատուի կողմից զեկուցագիր է կազմվել Պայմանագրի մատակարարման ժամկետի խախտման առնչությամբ:

6. 10.02.2021թ.-ի ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության գրությամբ ամրագրվել է, որ արդեն ստանձնած պարտավորությունների կատարման փաստաթղթերը մուտքագրվել մինչև 2020թվականի դեկտեմբերի 22-ը:

7. Պատվիրատուի կողմից 26.02.2021թ.-ին տեղեկագրում (www.procurement.am (www.gnumner.am) հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ ծանուցումը:

8. 26.02.2021թ.-ին Պատվիրատուի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

9. 26.02.2021թ.-ին Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է «Մեդիսար» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին:

10. ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.03.2021թ. թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ. թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ՝ ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հանգամանքներից ելնելով.

Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Պատվիրատուի կողմից 26.02.2021թ. տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Մեդիսար ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Ներկայացրել է 26.02.2021թ.-ին:

Այսպիսով՝ Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝(ա) խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալից ելնելով ակնհայտ է, որ Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 15.12.2020թ.-ին, երբ ապրանքի մատակարարման ժամկետը չի պահպանվել: Տվյալ դեպքում Պատվիրատուն ձեռնամուխ է եղել Պայմանագրի միակողմանի լուծմանը միայն սույն թվականի փետրվարի 26-ին: Ավելացնենք, որ Մեդիսար ՍՊԸ-ն համարվել է

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված տվյալ ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից, այն է 27.02.2021թ.-ից: Սակայն Պատվիրատուն Մեդիսար ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով ուղարկել է ֆինանսների նախարարությանը 26.02.2021թ.-ին, որը նախաձեռնել է Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում ներառելու ընթացակարգ՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ չլինելու պայմաններում:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտակա-նությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ կարգը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ավելին, համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. Տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

Նորմատիվ ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Անհաղթահարելի ուժ. Պայմանագրի 7-րդ կետ.

Պայմանագրի 7-րդ կետում ամրագրված է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն

ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ավելին, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի,

որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով (թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թվականի որոշում):

Մեդիսար ՍՊԸ-ն կնքված Պայմանագրի համաձայն պատվեր է ներկայացրել մատակարարող ընկերությանը դեռևս 19.11.2020թ.-ին: Սակայն հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, եղանակային անբարենպաստ պայմանները ապրանքի մատակարարումը ուշացել է: Պատվիրատուին ներկայացվել է համապատասխան գրություն բեռանտոհադրող ընկերության գրության հետ միաժամանակ, որով հիմնավորվել է Մեդիսար ՍՊԸ-ի կողմից ժամկետների խախտման՝ ֆորս մաժորային հանգամանքներով պայմանավորված լինելու փաստը:

Այսպիսով ստացվում է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից ապրանքը սահմանված ժամկետից ուշ մատակարարումը և վերջինիս ընդունումը մերժել այդ հանգամանքով պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ ելնելով այն փաստից, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2020թվականի մարտին հայտարարվել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային վիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ ՀՀ-ում և Գերմանիայում, որտեղից մատակարարվել է ապրանքը կորոնավիրուսային հիվանդությունը ստացել էր լայնածավալ տարածում, և երկներում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թվականի սեպտեմբերի էէ-ից, ժամը էև:ճճ-ից մինչև 2021թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514- ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի ՀՀ արտակարգ դրություն հայտարարելու մասին թիվ 298-Ն որոշումը և Գերմանիայի իրավասու մարմինների համապատասխան որոշումները, որոնց համաձայն հաղորդակցույթան, գործարանների աշխատանքների իրականացման հետ կապված սահմանափակումներ էին կիրարկվել:

Այսիսով, վերոնշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերից ակնհայտ է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն եղել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված ՀՀ-ում,

Գերմանիայում և ամբողջ Եվրոպայում համաճարակի առնչությամբ կիրառված սահմանափակումներով, արտակարգ դրության և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակի հանգամանքներով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մեդիսար ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս անկախ հանգամանքներով:

Ավելին, ելնելով կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով, 45-րդ կետով հարկ է նշել, որ ընթացակարգային ժամկետի սահմանումը, դրա պահպանումը չի կարող դիտարկվել որպես ինքնանպատակ, քանզի ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի կարող նախաձեռնվել իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը, ի լրումն վերոհիշյալ դիրքորոշման, 18.03.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.03.2021թ. թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր: Մասնակիցը համարում է նախաձեռնած ընթացակարգը ոչ իրավաչափ, ակնհայտ անհիմն և ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջնի, ներկայացնում ենք սույն դիրքորոշումը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 19.11.2020թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-20-9/42-1 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր);

2. Պայմանագրի թիվ 1 Հավելվածի համաձայն գնման առարկա հանդիսացող էլեկտրոնային վերլուծական լաբորատոր կշեռքի մատակարարման ժամկետ էր սահմանված 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.:

3. «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից անմիջապես պայմանագիրը ստորագրելուց հետո իր մատակարարին ներկայացվել է պատվերը, որի մասին է վկայում մատակարարի կողմից նոյեմբերի 19-ին ներկայացված Proforma invoice.

4. «Մեդիսար» ՍՊԸ-ի և մատակարարի միջև առկա նամակագրությունից ակնհայտ է, որ պայմանագիրը կնքելու պահին առկա չեն եղել որևէ հանգամանքներ, որոնք վկայելու էին պատվերի առաքման ուշացման մասին:

5. Մատակարարի պահեստից ապրանքը դուրս է եկել 02.12.2020թ.-ին, որը հաստատվում է նամակագրությամբ: Մատակարարը ուշացումը բացատրել է իր գործարանում աշխատակիցների վարակման, աշխատուժի պակասի և եղանակային պայմաններով, քանզի իրենց պահեստից ապրանքը «Մեդիսար» ՍՊԸ-ի անունից բեռնափոխադրում իրականացնող կազմակերպությանը՝ Լուսար Տրանս ՍՊԸ-ին հանձնվել է միայն 11.12.2020թ.-ին:

6. «Մեդիսար» ՍՊԸ-ն ցանկանում էր մատակարարել ապրանքը ավիափոխադրման միջոցով, սակայն ավիափոխադրումները տվյալ ժամանակահատվածում ծանրաբեռնված էին, առաջնահերթություն էր տրված սննդին և շուտ փչացող ապրանքներին:

7. «Մեդիսար» ՍՊԸ-ն ընտրել էր տվյալ պահին իրատեսական ցամաքային և ջրային փոխադրման տարբերակը, որպեսզի ապահովեր ապրանքի մատակարարումը մինչև դեկտեմբերի 21-ը:

8. Ջրային փոխադրումը իրականացնելիս շրջանցել են Թուրքիայի հետ սահմանը, քանզի պատերազմական վիճակից ելնելով անհարկի ուշացնում էին ապրանքների բացթողումը, վնասում էին բեռները:

9. Լուսար Տրանս ՍՊԸ-ի գերությունից ակնհայտ է, որ նման բեռնափոխադրումներ տևում են 10-16 օրացույցային օր: Սակայն, անցակետերի կուտակումների, Covid 19 համավարակով պայմանավորված խաթարված են եղել անցակետերի աշխատանքները:

10. «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովի կնքված պայմանագրով ստանձնված պարտավորության կատարումը սահմանված ժամկետներում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ. թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ՝ ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հանգամանքներից ելնելով.

Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Տվյալ պարագայում խախտման հիմքերը կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքը ֆորսմաժորային հանգամանքները, իսկ սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ավելին, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով (թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թվականի որոշում):

Մեդիսար ՍՊԸ-ն կնքված Պայմանագրի համաձայն պատվեր է ներկայացրել մատակարարող ընկերությանը դեռևս 19.11.2020թ.-ին: Սակայն հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, եղանակային անբարենպաստ պայմանները ապրանքի մատակարարումը ուշացել է: Պատվիրատուին ներկայացվել է համապատասխան գրություն բեռանտիսադրող ընկերության գրության հետ միաժամանակ, որով հիմնավորվել է Մեդիսար ՍՊԸ-ի կողմից ժամկետների խախտման՝ ֆորս մաժորային հանգամանքներով պայմանավորված լինելու փաստը:

Տվյալ պարագայում, «Մեդիսար» ՍՊԸ սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցները այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է արձանագրվել ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014թ.-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով որոշմամբ:

Այսպիսով ստացվում է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից ապրանքը սահմանված ժամկետից ուշ մատակարարումը և վերջինիս ընդունումը մերժել այդ հանգամանքով

պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ ելնելով այն փաստից, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2020թվականի մարտին հայտարարվել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային վիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ ՀՀ-ում և Գերմանիայում, որտեղից մատակարարվել է ապրանքը կորոնավիրուսային հիվանդությունը ստացել էր լայնածավալ տարածում, և երկներում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի ՀՀ արտակարգ դրություն հայտարարելու մասին թիվ 298-Ն որոշումը և Գերմանիայի իրավասու մարմինների համապատասխան որոշումները, որոնց համաձայն հաղորդակցույթան, գործարանների աշխատանքների իրականացման հետ կապված սահմանափակումներ էին կիրարկվել:

Այսիսով, վերոնշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերից ակնհայտ է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն եղել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված ՀՀ-ում, Գերմանիայում և ամբողջ Եվրոպայում համաճարակի առնչությամբ կիրառված սահմանափակումներով, արտակարգ դրության և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համավարակի հանգամանքներով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մեդիսար ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս անկախ հանգամանքներով:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:»:

4. <u>ՍՑ-LO-2021/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 19.11.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/42-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 15.12.2020թ.-ը) պետք է մատակարարի 1 հատ էլեկտրոնային վերլուծական լաբորատոր կշեռք ապրանքատեսակը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.02.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/680 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 19.11.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/42-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը նշված քանակներով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 2020թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.	Չմատակարարված քանակ
Էլեկտրոնային վերլուծական լաբորատոր կշեռք	հատ	1	1	1

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

v. Բեռնափոխադրումներ իրականացվող «Լուսար Տրանս» ՍՊԸ-ն Մասնակցին ուղղված գրությամբ հայտնել է, որ գերմանական Kern & Sohn GmbH ընկերության կողմից «Մեդիսար» ՍՊԸ-ին ուղարկված բեռը (invoice 40091976 dd. 02.12.2020) կանխատեսված ժամկետից ուշանում է եղանակային անբարենպաստ պայմանների և COVID-19 նոր

տեսակի կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանային անցակետերի գործունեության որոշակի ժամանակով դադարեցման, այնուհետև սահմանային կուտակումների պատճառով:

vi. Մասնակիցը Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ սույն թվականի նոյեմբերի 19-ին մեր միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/42-1» պայմանագրով «Մեդիսար» ՍՊԸ-ն պարտավորվել է մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը: Սակայն բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպերպության «Լուսար Տրանս» ՍՊԸ-ի կողմից ստացվել է ծանուցում այն մասին, որ եղանակային պայմանների և սահմանային կուտակումների պատճառով բեռի տեղափոխումը նախատեսված ժամկետից ուշանում է և բեռը Հայաստանի Հանրապետությունում կլինի 30.12.2020թ. կամ 01.01.2021թ: Պայմանագրով նախատեսված է, որ ֆորս-մաժորային իրավիճակներում պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից: Հաշվի առնելով այն փաստը, որ եղանակային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև COVID-19 նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանային անցակետերի գործունեության որոշակի ժամանակով դադարումը, այնուհետև սահմանային կուտակումները չէին կարող կանխատեսվել և կանխարգելվել Մասնակցի կողմից, ուստի խնդրել են Պայմանագրով նախատեսված ապրանքի հանձնման ուշացումը համարել հարգելի և ընդունել ապրանքը: Միևնույն ժամանակ տեղեկացրել են, որ ապրանքի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու պահից Մասնակցի կողմից կձեռնարկվեն հնարավոր բոլոր միջոցառումները հնարավորինս սեղմ ժամկետներում ապրանքների մատակարարումն իրականցնելու համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ*

«Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 19.11.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/42-1» ծածկագրով

գնման պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ.-ի 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 15.12.2020թ.-ը) մատակարարել էլեկտրոնային վերլուծական լաբորատոր կշեռք ապրանքատեսակը: Հաշվի առնելով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.02.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/680 ծանուցումը:

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բեռնափոխադրումներ իրականացվող «Լուսար Տրանս» ՍՊԸ գրությունը, որով վերջինս նշել է, որ «գերմանական Kern & Sohn GmbH ընկերության կողմից «Մեդիսար» ՍՊԸ-ին ուղարկված բեռը (invoice 40091976 dd. 02.12.2020) կանխատեսված ժամկետից ուշանում է եղանակային անբարենպաստ պայմանների և COVID-19 նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանային անցակետերի գործունեության որոշակի ժամանակով դադարեցման, այնուհետև սահմանային կուտակումների պատճառով, ինչի մասին Մասնակիցը տեղեկացրել է Պատվիրատուի և հայտնել է, որ բեռը Հայաստանի Հանրապետությունում կլինի 30.12.2020թ. կամ 01.01.2021թ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին և դրան կցված արտերկրում գործող արտադրող կազմակերպությունների կողմից տրված տեղեկատվություններին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից ապրանքների չմատակարարելու հանգամանքը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և

գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն

առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/59 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ